Հայաստանը ռուս-թուրքական հարաբերություններում

18-րդ Դար

- Ռուս-թուրքական բախումների մասին առաջին հիշատակություններն առկա են դեռյս 16-րդ դարից սկսած, բայց էականորեն դրանք մեզ վերաբերվում են 18-րդ դարի եզրագծից: Սա այն փուլն է, երբ Պետրոս Առաջինն, ավարտելով պատերազմը Բալթիկ ծովի համար, որոշեց հայտնվել նայ Կովկասում: Այդ նպատակի համար, հանդես գալով քրիստոնյա տիրակալի դիրքերից, նա գրգռեց մի քանի շարժումներ Հարավային Կովկասում՝ հայերի յ վրացիների մասնակցությամբ: Ավելին, հայ-վրացական համատեղ ուժերը հավաքվեցին յ սպասում էին Պետրոսի ժամանմանը Գանձակի Չոլակ վայրում: Երեք ամիս անիմաստ սպասելուց հետո նրանք վերադարձան իրենց տները, իսկ Պետրոսը կնքեց Կ. Պոլսի 1724 թվականի պայմանագիրը, որով ճանաչեց Թուրքիայի իշխանությունը Հարավային Կովկասի մեծագույն մասի վրա: Թուրքերն անմիջապես անցան գործի. գրավեցին Թիֆլիսը, Երյանը, Արցախը, Սյունիքը յ ընդհանրապես Հարավային Կովկասի զգալի մասը՝ դրանից բխող բոլոր հետյանքներով:

19-րդ դար

- Հաջորդ ռուս-թուրքական բախումը, որն անմիջականորեն վերաբերվում էր մեզ, դա 1806-1812 թվականների պատերազմն է: Այստեղ անենք մի միջանկյալ դիտարկում: Ռուս-թուրքական պատերազմները, որպես կանոն ընթանում էին երկու ճակատով՝ Բալկանյան և Կովկասյան: Կովկասյան ճակատում ռուսների հիմնական աջակիցները քրիստոնյա հայերն են: Շատ են դեպքերը, երբ վրացիները, մեգրելական կամ քարթլիի թագավորության ներկայացուցիչները ոչ միայն չեն աջակցել ռուսներին, այլ շատ դեպքերում նաև խոչընդոտել են:

- *1810 թվականին, երբ Տորմասովը տապալեց Ախալցխայի գործողությունը, նա որոշեց յուրատեսակ կերպով փոխհատուցել և հրաման արձակեց թալանել գավառի այն բոլոր գյուղերը, որոնք ժանտախտով վարակված չէին, իսկ դրանք հիմնականում հայկական գյուղերն էին: Զբավարարվելով սրանով, նա 1500 հայ ընտանիքների վերաբնակեցրեց Վրաստանի այլ մասերում, մասնակի հայաթափման ենթարկելով Ախալցխայի գավառը: Ինչևէ, 1812 թվականի մայիսի 16-ին Բուխարեստում հայ դիվանագետ Մանուկ բեյի միջնորդությամբ կնքված ռուս-թուրքական հաշտության պայմանագրով ռուսական արքունիքը նախապատմությունը տվեց դանուբյան տարածքներին: Բեսարաբիան զիջելու թուրքերի համաձայնությանը ռուսական դիվանագիտությունը պատասխանեց Անդրկովկասում գրաված Ախալքալաքի գավառը, Անապան ու Փոթին թուրքերին վերադարձնելու որոշմամբ:*



- Հաջորդը դա 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմն էր: Այս պատերազմից սկսած, հայերը չբավարարվելով միայն նյութական օգնություն, գիշերակացի կայաններ տրամադրելուց, հետախուզական տվյալներ հաղորդելուց, սկսում են արդեն կազմել կամավորական խմբեր, որոնք պետք է մասնակցեին պատերազմին՝ ռուսական զորքերի կազմում: Սա չէր կարող իր խիստ բացասական հետդանքները չթողնել Օսմանյան Կայսրությունում բնակվող հայերի վրա, ուր յուրաքանչյուր պատերազմի ավարտից հետո հիշում էին «թշնամուն» աջակցած հայերիս մասին: Այս պատերազմի ընթացքում, կարճ ժամանակահատվածում ռուսների տիրապետության տակ են անցնում այնպիսի տարածքներ, ինչպիսիք էին՝ Ախալքաղաքը, Ախալցխան, Արդահանը, Բայազետը, Ալաշկերտը, Էրզրումը, Օլթին, Խնուսը, Մուշը ֆ այլ բնակավայրեր: Սկայն, պատերազմի ավարտից հետո բացի Ախալքալակից, Ախալցխաից ֆ Փոթիից, մնացյալ տարածքները՝ Կարսը, Արդահանը, Էրզրումը, Մուշը, Բայազետը ռուսները վերադարձնում են թուրքերին: Արդյունքում այդ տաածքներում ապրող հայերը հայտնվեցին հալածանքների կիզակետում:

Ղրիմի պատերազմ

- 1853-1856 թվկաներին Ղրիմի պատերազմում բավականին էական է եղել հայերիս մասնակցությունը (բնականաբար, ռուսական կողմից): Սակայն Ռուսաստանի պարտության արդյունքում ստորագրված հաշտության պայմանագրով ի հավելումն այլ տարածքների, Ռուսաստանը Թուրքիային է վերադարձրել Արյմտյան Հայաստանում գրաված բոլոր տարածքները՝ հայերիս համար դրանից բխող բոլոր հետյանքներով:
- 1877-1878 թթ պատերազմի մինչ բուն սկիզբը, ռուսները ամպստամբական բռնկումներ հովանավորեցին Բալկաններում յ Արյմտյան Հայաստանում: Սակայն, եթե այս պատերազմների արդյունքում սերբերը, բուլղարները, ռումինացիները կստանան անկախություն, Հունաստանը կհայտնվի կիսաանկախ վիճակում, ապա մենք կհայտնվենք կոտրած թաշտակի առջյ:



20-րդ դարասկիզբ

- Առանձին գրքի թեմա է նայ առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ճակատը: 1914-1916 թթ. ռուսական զորքերի վայրիվեր արշավանքների՝ հարձակումների ֆ նահաջների, իսկ 1917-ի բոլշֆիկյան հեղաշրջումից հետո ընդհանրապես ճակատից դուրս գալու արդյունքնում հնարավոր եղավ ցեղասպանության իրագործումը: Թուրքերը ֆ նրանց կողմից հովանավորվող ջարդարարներն առանձնակի հաճույքով էին կոտորում հայերին, քանզի հայերը աջակցում էին իրենց ոխերիմ թշնամիներին՝ ռուսներին:
- Այսպիսով, ինչպես տեսանք, ռուս-թուրքական բոլոր պատերազմների ընթացքում, որոնք ընթացել են Կովկասյան ճակատում, ռուսներին ամենահավատարիմը եղել են հայերը, ֆ դրա համար բացառապես փոխհատուցել են կրած մարդկային միլիոնավոր ֆ տարածքային հսկայական կորուստներով: Ծառայել են հեզորեն՝ չստանալով ոչինչ:
- Ռուս-թուրքական պատերազմը սկսվեց Ռուսաստանի՝Հարավային Կովկասը գրավելու ցանկությամբ, սակայն ձախողումից հետո Ռուսաստանը ճանաչեց Հարավային Կովկասի մեծ մասը որպես Թուրքիայի տարածք, բայց որոշ ժամանակ անց մտափոխվեց ֆ որոշեց հետ գրավել այն: ֆ Turyiya-ն մերժում են այս դիմումը: Բայց Հայաստանի բախտը չբերեց. տեղակայված Թուրքիայի հետ